


352
Ա-57

Библиотека Института востоковедения Академии Наук СССР


# ՀՈՒՇԱԳԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆԿՈՒՐՍԻՆ


Հրատարակություն Անդրկենտգործկոմի

14 FEB 2013
39669

ԹԱՐԳՄԱՆԵՑ — Կ. ՋԱԼԱՖԻ
ՏԵԽ. ԽՄԲԱԳԻՐ—Կ. ԹՈՌԼԱՆՅԱՆ

352
Ա-57

Главлит № 4682. Ст. 364. Б.-5. Заказ № 2445. Тир. 1500.
Тип. „III Интернационал", Баку, ул. Саратовца Ефимова, 29.

35-Ա
Ձ825
2802-10

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՆԿՈՒՐՍԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԻՍՏԻՄ.
*26 մայիսի 1934 թ.*

# ՀՈՒՇԱԳԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆԿՈՒՐՍԻՆ

(Արտադրական ցուցանիշներ)

Արդյունաբերական նոր կենտրոնների ծագումը, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների զարգացումն ու ամրապնդումը, հեռավոր և հետամնաց շրջանների յուրացումը, բեռնաշրջանառության աճումը և ավտոտրանսպորտի արագ արմատացումը — պահանջում են ճանապարհային տնտեսության այնպիսի դրություն, վորը համապատասխանի Խորհուրդների յերկրի արագ աճող տնտեսական և կուլտուրական պահանջներին:

Սակայն, ճանապարհների ցանցի դրությունը, առանձնապես տեղական ճանապարհների ցանցի, մեզ մոտ ծայր աստիճան անբավարար դրության մեջ է գտնվում:

Վորպեսզի պատվով կատարենք 2-րդ հնգամյակի խնդիրները և 17-րդ համագումարում ընկ. Ստալինի արած ցուցմունքները ապրանքաշրջանառության ու

բեռնաշրջանառության մասին և ապահովենք ժողովըրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացումը— մեզ հարկավոր են լավ ճանապարհներ:

Անճանապարհությունը ԱՍԽՀ-ում ամոթ է բերում մեզ: Ճանապարհային շինարարության հետամնացությունը միանգամայն անհանդուրժելի յե:

Վորպեսզի վերացնենք անճանապարհությունը գյուղխորհրդի տերիտորիայում, 1934 թ. հուլիսից մինչև հոկտեմբերը անց է կացվում խորհուրդների համամիութենական կոնկուրս մրցություն:

Գյուղական խորհուրդը, մասնակցելով այդ մրցությանը, պետք է բոլշևիկորեն կարգի բերի, յերթևեկության համար այն բոլոր ճանապարհները, վորոնք մտնում են գյուղխորհրդի շրջանում: Այդ աշխատանքը դու պետք է կատարես քո տեղական միջոցներով (քար, ավազ, անտառափայտ և այլն) և վորպեսզի գյուղխորհրդի բոլոր աշխատավորությունը ինքը մասնակցի, ինքն աշխատի ճանապարհների, կամուրջների ու ճանապարհային մյուս կառուցումների շինարարության ու վերանորոգման վրա:

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴ, ԴՈՒ ԻՆՉ ԵՍ ԱՆԵԼՈՒ, ՎՈՐՊԵՍԶԻ ՀԱՂԹԱՆԱԿՈՂ ԼԻՆԵՍ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆԸ

Դրա համար —

1. Իսկույն և եթ կազմիր գյուղխորհրդի բոլոր ճանապարհների կառուցման և նորոգման պլանը, ճշտիվ վորոշիր և խիստ հետևիր, թե վորտեղ, յերբ և ինչ աշխատանք պետք է կատարվի, վորքան մարդ պետք է մասնակցի այդ աշխատանքում, վորքան սայլ պետք է մոբիլիզացիայի յենթարկվի քարի, ավազի, անտառափայտի և այլ նյութեր փոխադրելու համար: Այդ ամենը պետք է գրի առնել և իրագործել առանց հապաղելու:

2. Քո ճանապարհների կառուցման վրա լիովին օգտագործիր աշխատավորական հնարավորությունները (մարդիկ, սայլեր) վոչ միայն գյուղերի և կոլտնտեսությունների, այլ և խորհտնտեսությունների ու ՄՏԿ: Լիովին և անպայման օգտագործիր՝ օրենքով նախատեսված ժամկետով այն քաղաքացիների աշխատանքային հնարավորությունները, վորոնք ազատվում են գյուղատնտեսական հարկով անհատական կարգով կամ յեկամտային հարկով ըստ № 3 ցուցակով (առևտրականները, մոլլաները, քահանաներր և այլն):

3. Բոլոր նոր և հին ճանապարհներն ամրացրու մերձակա կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին, ՄՏԿ, առանձին գյուղերին, նույնպես և բրիգադներին: Բացատրիր, վոր նրանք պատասխանատու յեն նրանց ամրացրած ճանապարհների դրության համար: Զոկիր ճանապարհային սեկցիայի և պատգամավորական խմբակների անդամներին և նրանցից ամեն մեկին ամրացրու ճանապարհային աշխատանքների առանձին հողամասին, ինչպես ավարտվածներին, նորոգվողներին, նույնպես և կառուցման մեջ գտնվողներին: Դրանով դու կստեղծանես ամենորյա հսկողություն:

Գյուղխորհրդի նախագահ. — ամեն որ, ինքդ անձամբ հետևիր աշխատանքի ընթացքին:

4. Ճանապարհային աշխատանքները կատարիր միմիայն առաջադրանքների և աշխատանքային նորմաների հիման վրա և աշխատանքը կազմակերպիր բրիգադային ձևով: Գլխավորը, հետևիր վորակին, գործի նշանակիր այնպիսի մարդկանց, վորոնք կարող են մարտականորեն աշխատել:



56730-66

5. Պահպանիր կամուրջները հեղեղումներից, հրդեհներից և այլ տարերային պատահարներից: Ճանապարհի կողքերին շինիր խանդակներ անձրևաջրերի համար, մանր փոսեր և այլն: Ճանապարհների ամբողջ յերկարությամբ ծառեր տնկիր և հետևիր նրանց անվնասությանը: Թույլ չտաս տրակտորներին ճանապարհներով անցնել՝ առանց կցորդ գութանների խոփերը բարձրացնելու: Գյուղխորհրդի բոլոր ճանապարհների վրա կանգնեցրու ուղեցույց սյուն՝ վրան մակագրած — թե ուր է տանում ճանապարհը, քանի կիլոմետր է:

6. Շուտով սկսվելու յեն բերքահավաքը և մթերման կամպանիաները: Յեթե մինչև այդ կամպանիաները դու բոլշևիկորեն այդ բոլոր ճանապարհները կարգի բերես, ապա ուրեմն դու հաղթանակող դուրս կգաս ճանապարհային շինարարության համամիութենական մրցությանը:

Վորպեսզի այդ ձեռք բերվի, դու պետք է կանոնավոր կազմակերպես գյուղի աշխատավոր մասսային, այնպես անես, վորպեսզի կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների մասսան և գյուղական ակտիվը մասնակցություն ունենան ճանապարհային շինարարության, նորոգման, ճանապարհների, կամուրջների և այլնի բարեկարգման և պահպանման:

Դրա համար —

1. Կազմակերպիր գյուղխորհրդին կից ճանապարհա — տրանսպորտային սեկցիա, յեթե նա մինչև այժմ չի կազմակերպված: Պրեզիդիումի անդամներից մեկին նշանակիր այդ սեկցիայի աշխատանքները տանելու համար: Հետևիր, վորպեսզի կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ, գյուղխորհուրդի պատգամավորական խմբակներն աշխատեն ճանապարհային շինարարության գործում: Ոգնիր նրանց ամեն որ, տալով նրանց առաջադրանքներ և ստուգիր կատարածը:

2. Ընդհանուր ժողովներում, բրիգադներում, առանձին տնտեսություններում, ճանապարհների վրա, կոլտնտեսությունում, գյուղում, ՄՏԿ-ում, խորհտնտեսությունում բացատրիր խորհրդային որենքներն ու հրահանգները, կազմակերպիր կոլեկտիվ ընթերցում, — այն մասին, թե ինչպես պետք է կառուցվեն ու նորոգվեն ճանապարհները և ինչպես պետք է աշխատի աշխատավոր ազգաբնակությունը այդ ճանապարհի վրա: Բացատրիր, վոր մեր հանրապետությունը մրցության պայմանագիր է կնքել Հայաստանի, Զուվաշյայի, Դաղստանի հանրապետություններ հետ՝ անճանապարհության դեմ պայքարելու համար: Ամբողջ աշխատավորությանը հասցրու այն պլանը, վորը դու յես կազմել, թե ինչպես նրանք պետք է իրագործեն այդ պլանը և հատկապես ով և ինչի համար է պատասխանատու: Գործի մեջ քաշիր պատի թերթը, խրճիթ — ընթերցարանները, ուսուցիչներին, կոմյերիտական ակտիվը և այլն: Կազմակերպիր սոցմրցություն և հարվածայնություն ճանապարհային շինարարության յավագույն գործի համար կոլտնտեսությունների և առանձին բրիգադների միջև, գյուղերի միջև, պատգամավորական խմբակների, բնակելի կետերին գյուղխորհուրդների կողմից ամրացված լիազորների միջև: Առաջավորների փորձը տուր հետ մնացողներին: Սոցմրցության մեջ մտիր հարևան գյուղխորհրդի հետ: Ստուգիր թե ինչպես են իրագործվում պայմանագրերը:

3. Հաշվիր, գրիր և կոլտնտեսություններին ու առանձին անձանց հանձնիր ծանուցումն այն մասին,

թե յերբ, վորտեղ և մարդկանց ու սայլերի ինչպիսի թիվ պետք ե դուրս բերեն նրանք ճանապարհների շինարարության և նորոգման համար: Խիստ միջոցներ ձեռք առ խուսափողների դեմ: Կոլտնտեսություններից և առանձին անհատներից իր ժամանակին պահանջիր՝ նրանց չաշխատած աշխպարտիքի փողը և հանձնիր խնայդրամարկղին: Այդ փողը կարելի յե ծախսել միայն ճանապարհային շինարարության կարիքների համար:

4. Մերկացրու և վճռականորեն հարվածիր կուլակային — հակախորհրդային տարրերի բոլոր մեքենայությունների ու փորձերը՝ ճանապարհային տնտեսությանն ու շինարարությանը վնասելու համար, — դիտավորյալ կերպով ճանապարհները վոռոգումով փչացնելու, կամուրջների հրդեհելու, անցման կետերի փչացնելու, նյութեղենը թալանելու, հակաճանապարհային ագիտացիայի համար և այլն: Միշտ հիշիր, վոր կուլակը — լավ ճանապարհների թշնամին յե:

5. Կանոնավոր ներկայացրու հաշիվները վերադաս կազմակերպություններին այն մասին, թե ինչպես ե կատարվում ճանապարհային շինարարությունը, գործը ինչ չափով ե կատարված, ազգաբնակությունից վորքան մարդ ե աշխատել այդ ճանապարհների վրա, քեզ մոտ ինչպես ե գնում ճանապարհային շինարարության մրցությունը:

Գյուղխորհուրդ. ճանապարհները — մեր յերկրի հիմնական ջիղն ե: Վերացրու անճանապարհությունը: Ցույց տուր քո դրացի գյուղխորհուրդներին ճանապարհային շինարարության, լավագույն ճանապարհների ու կամուրջների համար բոլշևիկյան պայքարի որինակներ:



Գյուղխորհրդի նախագահ: Հիշիր, վոր սոցիալիզմի շինարարության գործին քո նվիրվածությանը կուսակցությունն ու պետությունը կդատեն և նրանով, թե դու ինչպես ես, ի թիվս մյուս գործերի, պայքարել որինակելի բարեկարգ տեղական, հանրապետական և միութենական ճանապարհների ու կամուրջների համար՝ գյուղխորհրդի տերիտորիայում:

---

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀԱՍԽՀ—Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0220795

39 669

1
2

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР